

12352

982-6

PM

ԼԿՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ
№ 6 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՈՒ 6

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
== ԳՅՈՒՂԸ ==

308
/u-84



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1926

308

4-84

25 SEP 2006

1 DEC 2009

ԼԿՅԵՄ Օ.Ռ.Ս.ՋԻՆ Ս.ՍՏԻՃԱՆԻ

№ 5 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ Մ: 5

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂՔ

19651



Handwritten signature in red ink.

1190

ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՏՐԱՆՍԿՐԻՍՏԻՆ, ՅԵՐԵՎԱՆ—1926

0009 932 7
11 3.05.2013

12352



№ 472 Գրտեսպիար № 901 (բ) Տիրամ 4000

Պետրասի առաջին տպարան վաղարշապատում

398-95

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԸ

Նախընթաց զրույցում մենք վերլուծեցինք պետական արդյունաբերության հարցը: Այժմ քննենք լերկրի ժողովրդական տնտեսության մի այլ ճյուղը՝ գյուղատնտեսությունը: Մենք արդեն գիտենք, Վոր գյուղատնտեսությամբ զբաղված է ԽՍՀՄ բնակչության ճնշող մեծամասնությունը: Գյուղատնտեսությունը մեր տնտեսության գերակշռող մասն է:

Մի պտույտ կատարենք գյուղատնտեսության զանազան անկյուններում և պարզենք նրա զարգացման մակարդակը, իմանանք, թե ինչպես է ընթանում գյուղի շերտավորումը: Ցեղ լերբ մենք զինված կլինինք այսպիսի տեղեկություններով, այն ժամանակ մեզ համար հեշտ կլինի պարզել, թե գյուղն ինչպիսի ճանապարհներով կհասնի սոցիալիզմին:

ՄԵՐ ԳՅՈՒՂԸ

Գյուղատնտեսության Բավական և մեկ-լերկու որ քյան ցածր մա- շրջել գյուղացու դաշտերով, բա- կարգակը, վական և մեկ-լերկու շաբաթ ապրել գյուղացու մոտ ու գիտել նրա տնտեսու-

թյունը, վորպեսզի կարելի լինի ասել, վոր ԽՍՀՄ գյուղացու տնտեսությունը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա:

Յերրորդ զրույցում մենք կարդացինք, վոր գյուղատնտեսությունը վերջին տարիներում զգալիորեն բարձրացել է և շատ մոտ է նախապատերազմյան մակարդակին: Շնորհիվ կուսակցության ճիշտ քաղաքականության, ՆեՊ-ի տարիներում գյուղատնտեսության բարձրացման բնագավառում մեր նվաճումներն իրոք շատ մեծ են: Բայց չէ՞ վոր գյուղատնտեսության նախապատերազմյան աստիճանն էլ չափազանց ցածր էր:

Իհարկե գյուղացու հողից ստացած բերքի թվերը: ԽՍՀՄ մեջ մեկ դեսիատինից միջին թվով ստացվել է՝

	1905-14թ.	1920թ.	1921թ.	1922թ.	1923թ.	1924թ.
Տարեկան (բոլշև)	50,0	35,1	37,2	35,1	44,6	40,3
Յորեն	44,6	27,6	23,4	41,8	33,0	38,1

Հայաստանում միջին բերքը մեկ դեսիատինից յեղել է.

Բույսերի անունները	1914թ.	1919թ.	1922թ.	1923թ.	1924թ.
Աշնան ցորեն . . .	62,5	48,4	50,6	50,6	44,5
Գարնան ցորեն . . .	36,5	33,9	32,7	30,6	30,0
Աշնան գարի . . .	56,2	37,7	30,8	40,0	30,5
Գարնան գարի . . .	56,2	37,7	47,4	48,2	35,8

Ինչպես տեսնում եք, մեզանում ցորենի ու գարու միջին բերքը ներկայումս ավելի ցածր է, քան պատերազմից առաջ էր: Իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմները խիստ քայքայեցին մեր գյուղատնտեսությունը: Մեր գյուղացու տնտեսության հետամնացությունն ավելի ակնհայտ է դառնում, յերբ մենք համեմատում ենք ցորենի ու տարեկանի (բոլշև) բերքը մեզանում և յեվրոպական յերկրներում:

Ստացվում է մեկ դեսիատինից (փթերով)՝

	Յորեն	Տարեկան
Բելգիայում . . .	156 փութ	149 փութ
Գերմանիայում . . .	110 »	110 »
Ֆրանսիայում . . .	85 »	70 »
Հայաստանում (1924թ.)	30 »	35 5 »

Մինչդեռ մեր հողն այդ բոլոր յերկրների հողից վատ չէ: Ապա ինչո՞վ է բացատրվում մեր գյուղատնտեսության հետամնացությունը:

Գլխավոր պատճառը գյուղատնտեսության հետադարձ գիտական տնտեսության բաժանման ցուրյան բաժան դրությունն է: Խոշոր պատճառները. ձեռնարկությունը շատ ավելի արդյունավետ է, քան մանր ձեռնարկությունները: Այսպես, որինակ՝ արդյունաբերության հաջող զարգացումը հիմնված է ձեռնարկությունների կենտրոնացման (համախմբման) վրա: Մանր ձեռ-

նարկությունները միանում են կամ փոխարինվում խոշոր ձեռնարկություններով: Այդ հանգամանքը հնարավորութուն է տալիս գործադրելու նոր կատարելագործված մեքենաներ, վորոնք չափազանց բարձրացնում են արտադրողականությունը: Իսկ Նորհրդային Միության գյուղերում կա 20 միլիոնից ավելի առանձին գյուղացիական տնտեսություն:

Գյուղացիական տնտեսությունների առանձնացման հետևանքն այն է լինում, վոր հողը մշակվում է հետամնաց ձևերով, քիչ են գործածվում գյուղատնտեսական մեքենաներ:

Յերկրորդ զրույցում նկարագրված էր, թե ինչպիսի գործիքներով է մշակում իր տնտեսությունը Նետաշեցկի Կավառակի գյուղացին: Ինարկե, մեր գյուղատնտեսության մեջ նման հետամնաց անկյուններ հաճախ չեն պատահում: Բայց մեզանում մինչև այժմ կան ամբողջ շրջաններ, մանավանդ ծայրամասերի ազգային հանրապետություններում, վորտեղ հողը փորվում է նախապայերի բրիչով (թորխով), այսինքն յերկաթե ծայր ունեցող մի կեռ փայտով:

Բայց միայն ծայրամասերում չէ այդպես. ավելի զարգացած արդյունաբերական շրջաններում անգամ, գյուղատնտեսության մեջ արորն ավելի տարածված է, քան յերկաթե գուլթանը: Ընդ-

հանրապես՝ գյուղատնտեսական աշխատանքի ինտեսերորդականը կատարվում է ձեռքով և միայն մեկ տասերորդականը մեքենայով:

Բացի այդ՝ գյուղատնտեսությունը տուժում է յեռագաշտից, պարապ թողած ցելատեղից (հանգրստացող հողից) և ուշ հերկից: Մեր Նորհրդային Միության միայն յեվրոպական մասում ամեն տարի ցելատեղից իզուր կորչում է 40 միլիոն դեսիատին հող, իսկ արտատեղերը, ճահիճները, ցանելու համար այլ անպետք հողերը բռնում են մոտ հիսուն միլիոն դեսիատին տարածություն:

Գյուղատնտեսության առանձնացումը, գյուղատնտեսական ցածր տեխնիկան հետևանք են գյուղացիական մասաների կուլտուրական հետամնացության: Վորպեսզի ցույց տանք, թե նախապաշարումները, խավարն ու տգիտությունը վորքան են ազդում գյուղացու տնտեսության վրա, բերենք մի որինակ, վորը պատմել է ընկ. Յակովլևն իր «Մեր գյուղը» գրքուկում:

«Դարնանը մենք դաշտերով անցնում էյինք հարևան գյուղը Իզմալովկա գյուղի մի բնակչի հետ: Ճանապարհին տեսանք մկների բներ, մկների մի ամբողջ քաղաք: Պարզ էր, վոր մկների արշավ էր սկսվելու գյուղացու հացի դեմ: Իսկ գյուղացին մտախոհությամբ ասում է. «Մկները

լավ նշան են. բերքն առատ է լինելու... Յեվ
խակուն լեթ փոքր ինչ կասկածով ավերացնում
է. «Թեև անցյալ տարի չել, ճիշտ է, մկներ շատ
կային, բայց չոգնեցին, բերքը շատ վատ եր»...

«Սակաջն կասկածը շատ յերկար չի տևում:
Միբանի բոպե անց, յերբ անցնում էյինք մրկ-
ների մի այլ թագավորության մտաով, ավերա-
ցնում է. «Ով գիտե, գուցե աստված տալիս է,
և այս տարի մկներն իրենց հետ առատ բերք են
բերում»:

«Այն բոլոր գյուղերում, վորտեղ մենք յե-
զանք, կորեկի բերքի 30 տոկոսը կերել էյին վա-
սատուները: Այդ վնասատուին վոչնչացնելու միակ
միջոցն է սերմացուն ֆորմալինով լվանալը:
Ֆորմալինը հողբաժինը ձրի չե տալիս: Յեվ մենք
ֆորմալինի գործադրությունն չտեսանք գյուղա-
ցիների մոտ (բացառությամբ մեկ-յերկուսի):
Նույնիսկ լավագույն գյուղատնտեսական կոպե-
րատիվները, վորոնց հետ մենք ծանոթանում
էյինք, նույնպես այդ միջոցին չէյին դիմում:
Յեվ չէյին դիմել վոչ թե նրա համար, վոր խել-
քըները չի հասել կամ չեն իմացել. վոչ, խելքը-
ներն ել լավ է հասել, իմացել ել են, բայց... «Դե,
չեղավ, ելի...»:

Գյուղատնտեսության հետամնացությունը
ցարական հին Ռուսաստանի ժառանգությունն է:

Գյուղացու անտեսությունը ծանրաբեռնված էր
նրա ուժից վեր հարկերով, գյուղացիությունն
ստիպված էր հսկայական գումարներ վճարել
կալվածատերերին վորպես կալութավարձ (արենդ)
ու յետգնման փող:

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ տվեց
կալվածատիրական հողատիրության: Այդպիսով
նա վերացրեց մեր գյուղատնտեսության արագ
վերելքի գլխավոր խոչընդոտը: Այդ վերելքն
արդեն սկսվել է: Տարեցտարի նա ավելի նկա-
տելի յե դառնում: (Թե ինչպես գյուղատնտեսու-
թյունն աճեց ՆեՊ-ի տարիներում, մենք ավելի
մանրամասնորեն քննության կառնենք հաջորդ
վեցերորդ գրույցում):

ԳՅՈՒՂԻ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ

Մենք վերևում խոսեցինք այն ծանր ժա-
ռանգության մասին, վոր ստացել էր գյուղա-
ցիությունը ցարիզմից: Այժմ դառնանք այն հար-
ցին, թե ինչ են իրենցից ներկայացնում գյու-
ղացիության առանձին խմբերը:

Գյուղացիությունը միա-
Միջակը, չհավո- տարր չէ: Մենք ընդունում ենք
րըն ու կուլակը. գյուղացիական անտեսություն-
ները չերեք տարբեր խմբակներ՝ կուլակի, չբա-
վորի ու միջակի անտեսություններ: Քննենք, թե

ինչ հասկանիչներ ունի այդ խմբակներէց յուրաքանչյուրը, վորից հետո կորոշենք, թե ինչպիսին ե կուսակցութեան ու Սորհրդային իշխանութեան վերաբերմունքը դեպի միջակը, չքավորն ու կուսակը:

Սհա կոնստանտին Պետրո-
 Գյուղացիակաճ
 յերկու սեփսու-
 րյուններ՝ վեր-
 ժուլովի յեվ Շո-
 վիչեվի սեփսու-
 րյունները:

Վիչ Վերշուլովի տնտեսությունը: «Հեղափոխութեանից առաջ նա ունեցել է 56 դեսիատին հող: Բացի դրանից՝ նա զբաղվել է փայտեղենի առևտրով և փուռ է ունեցել: Տարեկան նրա շրջանառությունը հասել է 50 հազար ռուբլու: Բայց և այնպես նա հողից ձեռք չի քաշել: Առևտրից ստացած յեկամուտի մի մասը նա գործադրել է իր գյուղական տնտեսութեան ընդարձակման վրա: 1920 թվին, ինչպես գյուղացիք են ասում, նրան «կարգի բերեցին» (սլեցին հողը, փուռն ու անտառը):

ՆեՊ-ի տարիներին Վերշուլովը արագ վտաքի կանգնեց: Այժմ նա գյուղում ամենից շատ ցանքս ունեցող գյուղացին է: Առևտուրն առայժմ նրա հիմնական ոժանդակ միջոցն է, վորով նա ընդարձակում է իր գյուղացիական տնտեսությունը: Նա իր գնորդներին ամսական մինչև 150 ռուբլու վարկ է տալիս: Այդ վարկով նա իր ձեռքումն է պահում մեծ թվով գյուղացիներ»:

Այժմ դիտենք գյուղացի Փոմիչևի տնտեսությունը: Նա լծկան չունի, ունի միայն մի կով, 2 դեսիատին հող: Աշխատում են ինքն ու կինը: Ունեն յերկու փոքր յերեխա:

«Սկսեցինք հարցուփորձ անել նրան. արդյոք հաց վաճառում ե, վճրտեղից ե լծկան վերցնում, ստացած յեկամուտը բավականանում ե արդյոք ընտանիքի ապրուստի համար:

«Բանից յերևաց, վոր Փոմիչևին իր հացը չի բավականացնում, նա ստիպված է գրսից հաց առնել: Աշնանը, ճիշտ է, ծախել է 7 փուլթ, վորպեսզի ստացած փողով քաղաքում գնի իր տրնտեսութեանն անհրաժեշտ իրեր: Իսկ գարնանն ստիպված յեղավ 15 փուլթ հացահատիկ գնել, թե չէ յուր չեյին գնա մինչև նոր կալը»: Լծկան ձին վերցրել են մի հարուստ գյուղացուց:— Ի՞նչ պայմաններով, — հարցնում ենք մենք: Փոմիչևը միանգամից չի պատասխանում: Հետո ասում է, վոր հարուստն ոգնել է վորպես հարևանի: Բայց վերջիվերջո պատմում է, վոր ձիուց ոգտվելու համար հարևանին վճարել է իր ապագա բերքի մի վեցերորդ մասը:

«Տնտեսութեան յեկամուտը չի բավականացնում ընտանիքի ապրուստին:

«Ժամանակ առ ժամանակ Փոմիչևը, վորպես բատրակ, վարձվում է հարուստ գյուղացիների

մտա կամ յերկու-յերեք ամսով գնում ե քաղաք աշխատելու»:

Ինչով են տարբերվում իրարից այդ յերկու տնտեսությունները:

Փոմիչեվի տնտեսությունն աշխատանքային տնտեսությունն է, անաշխատ յեկամուտ նա չունի: Իսկ Վերշուլովն իր յեկամուտի մեծ մասն ստանում է առևտրից ու վաշխառությունից. նա պարտքով փող է տալիս և «բարեխիղճ» տոկոսներ է վերցնում:

Վերշուլովի ցանքան ամենից շատն է գյուղում: Նա ունի բավական քանակությամբ հացի ավելցուկ և կարող է հացի մեծ առևտուր անել: Փոմիչեվն ունի ընդամենը 2 դեսիատին հող. նա վոչ միայն ավելցուկ չունի, այլև ստիպված է դրսից հաց գնել:

Փոմիչեվն իր ընտանիքը կերակրելու համար ստիպված է բատրակ վարձվել և վաճառել իր բանվորական ուժը: Միանգամայն այլ է Վերշուլովի դրությունը: Հետգհետե ընդարձակելով իր հողային տնտեսությունն ու առևտուրը՝ նա մեծ քանակությամբ բատրակներ է վարձում:

Փոմիչեվը գյուղատնտեսական ինվենտար չունի: Հողը մշակելու համար նա լծկան է վերցնում հարուստ գյուղացուց չափազանց ծանր պայման-

ներով. Իսկ Վերշուլովը նույնիսկ ազատ փող ունի վաշխառության համար:

Ահա թե ինչ տարբերություն կա կուլակի ու չքավորի միջև: Փոմիչեի պես չքավորին Լե-նինն անվանում եր «կիսապրոլետար», այսինքն՝ կիսաբանվոր: Փոմիչեը մանր սեփականատեր է, բայց նա յերբեմն ստիպված է վարձվելու վորպես բանվոր: Իսկ Վերշուլովը կամ, դիցուք, Սկորոչկինը, վորի հետ մենք ծանոթացանք յերկրորդ գրույցում — դրանք գյուղական կապիտալիստներն են: Թե Վերշուլովը և թե Սկորոչկինը շահագործում են ուրիշ աշխատանքը, հարստանում են իհաշիվ ուրիշ գյուղացիների՝ Սկորոչկինը բատրակներ վարձելով, Վերշուլովն առևտուր անելով ու վաշխառությամբ:

Միկուլիցի և Միշակների ներկայացուցիչ Միշակ Երեսուկուլինի հետ մենք ծանոթացանք Բյուքը. մեր յերկրորդ գրույցում: Հիշենք, թե ինչ եր գրված նրա տնտեսության մասին, և վորոշենք, թե ինչով է Միկուլինի տնտեսությունը տարբերվում Փոմիչեի չքավոր տնտեսությունից և Սկորոչկինի ու Վերշուլովի կուլակային տնտեսություններից:

Չքավոր Փոմիչեը, ունենալով յերկու դեսիատին ցանքս, վոչ միայն հացի ավելցուկ չունի, այլ ստիպված է դրսից հաց առնել: Միկուլինի մի-

Ղակ տնտեսությունը, 4 դեսիատին ցանքս ունե-
նալով, բավականաչափ հաց ե ստանում ուտելու
համար և մասամբ ել ավելցուկ ե յետ զցում
շուկայում վաճառելու համար: Բերքի տարինե-
րում Միկուլինը վաճառում ե մինչև 80 փութ
հաց:

Տնտեսությունից ստացած չեկամուտը չի
բավարարում Փոմիչևի կարիքները, տարվա մի մա-
սը նա ստիպված ե աշխատել կամ գյուղում վոր-
պես բարակ, կամ քաղաքում վորպես բանվոր:
Մինչդեռ Միկուլինն ապրում ե իր տնտեսության
յեկամուտներով և նպաստավոր պայմաններում
կարող ե վորոշ խնայողություն ունենալ: Ինչպես
տեսանք, խնայած գումարներով Միկուլինն ու-
ղում ե սերմացան մեքենա գնել:

Միկուլինը, թեև, իհարկե, վոչ բավարար քա-
նակությամբ, բայց և այնպես ունի գյուղատնտե-
սական ինվենտար, ունի մի ձի, գութան, շու-
տով կունենա և սերմացան մեքենա: Իսկ Փոմի-
չևն իր տնտեսության համար ստիպված ե ծանր
պայմաններով լծկան ձի վերցնել հարուստ գյու-
ղացուց: Ահա այս ե միջակ ու չքավոր տըն-
տեսությունների միջև յեղած տարբերությունը:

Սակայն Միկուլինի տնտեսությունը խիստ
տարբերվում ե նաև Սկորոչկինի ու Վերշուլովի
տնտեսություններից: Միկուլինի տնտեսությունն

աշխատանքային և վոչ թե շահագործական տըն-
տեսություն ե: Միկուլինը չի հարստանում ու-
րիշի աշխատանքի հաշվին, այլ տնտեսապես բար-
ձրանում ե միայն իր սեփական աշխատանքով:
Մինչդեռ Սկորոչկինն ու Վերշուլովն զբաղվում
են նրանով, վոր բերթում են իրենց չքավոր հա-
մագյուղացիների կաշին:

Մենք ցույց տվեցինք գյուղացիական յերեք
տնտեսություն—կուլակի, չքավորի ու միջակի
տնտեսություններ: Մենք վորոշեցինք յուրաքան-
չյուր տնտեսության հատկանիշները: Այդ, իհար-
կե, չի նշանակում, վոր ամեն տեղ և միշտ ել
կուլակի տնտեսությունը ճիշտ նույնն ե, ինչ-
պիսին ե Վերշուլովինը, միջակինը՝ նույնը, ինչ-
պիսին Միկուլինինն ե և այլն: Այդ պեսք ե նկա-
տի ունենալ մանավանդ այն ժամանակ, յերբ
խոսքը վերաբերում ե հողի քանակին: Ամենուրեք
հավասար չե գյուղացիների ձեռքում գտնված
հողի քանակը. զանազան վայրերում տարբեր ե
նաև հողի բերրիությունը: Որինակ՝ Մոսկվայի շր-
ջանում 4 դեսիատին հող ունեցող տնտեսությու-
նը կարելի յե միջակ համարել, իսկ Հյուսիսային
Կովկասում՝ չքավոր: Միբերում 15 դեսիատին հող
ունեցողը սովորաբար միջակ տնտեսության խըմ-
բին ե պատկանում, իսկ Ուկրաինայում դա
կուլակային տնտեսություն ե: Միջակ տնտեսու-

թյունների մեջ մենք գտնում ենք ավելի հարուստներ, վորոնք մոտ են կուլակայինին, և ավելի պակաս հարուստներ, վորոնք ավելի մոտ են չքավորներին: Ուստի չի կարելի սահմանել մի ճիշտ չափ, վորով կարելի լիներ վորոշել, թե տվյալ գյուղացիական տնտեսությունը վոր խումբին է պատկանում: Սակայն այն հատկանիշները, վորոնց մասին մենք վերևում խոսեցինք, բավական են, վորպեսզի կուսակցությունը կարողանա հիմնականում ճիշտ քաղաքականություն վարել գյուղում:

Միջակը հողագործության ղերում չքավոր տնտեսությունները կազմում են 40 տոկոսը, կուլակայինները՝ 3—4 տոկոսը: Տընտեսությունների մեծամասնությունը միջակներն են. վերջիններիս են պատկանում բոլոր գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին: Միջակ տնտեսություններն են տալիս շուկա բերվող հացի համարյա կեսը: Ահա թե ինչու է ենինն ասում եր, վոր «միջակը հողագործության կենտրոնական դեմքն է»:

Գյուղը միշտ էլ միջակ չի յեղել. նա միջակ դարձավ ռազմական կոմսունիզմի ու քաղաքացիական պատերազմի տարիներում: Այն ժամանակ տեղի յեր ունենում գյուղի հավասարեցումը:

րեցումը: Կայվածատերերից և մասամբ կուլակներից խաժ հողը բաշխվեց գյուղի ավելի չքավոր խավերի միջև: Վորոշ փոփոխություն կատարվեց՝ կուլակային տնտեսությունների մի մասն «իջավ», իսկ չքավորների մի մասը «բարձրացավ» մինչև միջակի աստիճանը:

Լենինն այսպես է ասում գյուղում ռազմական կոմսունիզմի ունեցած արդյունքների մասին.

«Իսկ ի՞նչ յեղավ հետևանքը: Հետևանքն այն յեղավ, վոր գյուղում գերակշռող տարրը հանդիսացան միջակները... Նվազեցին ծայրահեղությունները գեպի կուլակությունը, նվազեց՝ գեպի չքավորությունը, և բնակչության մեծամասնությունն սկսեց մոտենալ միջակին»:

Այդ յերևույթն ավելի պարզ յերևում է հետևյալ թվերից, վորոնք ցույց են տալիս Սորհրդային Միության մեջ հողի վերաբաշխումը 1917 թվից մինչև 1919 թիվը. —

	Յանքս չունեցող	10 դեսիատինից ավելի ցանքսով
1917 թվին	11 3 ⁰ / ₀	5, 1 ⁰ / ₀
1919 թվին	6 6 ⁰ / ₀	1, 5 ⁰ / ₀

Այսպիսով գյուղը «միջակացավ» ռազմական կոմսունիզմի տարիներում: Նե՞ղ-ից հետո կրրկին սկսվում է գյուղի շերտավորումը: Այդ նշա-

398-95 19651



նակում ե, վոր աճում են կուլակային, շահադործող տնտեսությունները, և միևնույն ժամանակ ավելանում ե բատրակների թիվը: Ազատ առևտուրն անխուսափելիորեն առաջացնում ե գանազան Սկորոչկիններ և Վերչուլովներ: Սակայն այժմ ել միջակը գյուղացիության մեջ գլխավոր հիմնական դեմքն ե:

Մենք չպետք ե աչքաթող անենք գյուղում կուլակի գոյությունը:

Ինչպես և նեպմանը, կուլակն ել մեր թըշնամին ե: Թշնամուն հաղթելու համար ամենից առաջ պետք ե իմանալ նրա ուժը: Ահա թե ինչու կուսակցության համար այնքան կարևոր ե ուսումնասիրել գյուղի շերտավորման ընթացքը, նրա չափերը, նրա թափը (այսինքն, թե ինչ արագությամբ ե նա առաջ գնում):

Չափազանց վտանգավոր կլինեն չնկատել գյուղում կապիտալիստական տարրերի աճումը: Այդ կնշանակեր շտեպնել իր թշնամուն, հետևապես և անգն լինել նրա դեմ մղած կովում: Բայց պակաս չափով վտանգավոր չե գյուղի շերտավորման ընթացքի գերագնահատությունը. այդ կնշանակեր թշնամուն տեսնել չափազանցրած ձեվով: Այդ խուճապ ե ստեղծում և թույլ չի տալիս, վոր մենք ճիշտ մոտենանք կուսակցության առաջ դրած խնդիրների լուծման: Գյուղի

շերտավորման գերագնահատության աչքավիսի որինակ տվեց կուսակցության նոր ուղղություն թե կուսակցության 14-րդ համագումարում և թե դրանից առաջ: Ուղղություն պարզ ցույց տվեց, վոր շերտավորման սխալ գնահատականը, «խուճապը կուլակի հանդեպ» խոշորագույն սխալներ ե առաջացնում կուսակցության հիմնական, վճռական հարցերում:

Կուլակության զարգացման ուղիները յերկուսը մեզ արդեն երևում ե քրտնալուծում կուլակուրյան գարգացումը. շահագործում (Սկորոչկին), առևտուր ու վաշխառություն

(Վերչուլով):

Կուլակի հարստացման յերրորդ ճանապարհն ե հողի վարձակալությունը (արենդա): Չբավոր տնտեսությունների մի մասը միջոցներ և ինվենտար չունի իր հողը մշակելու համար. և չբավորն իր հողը վարձով ե տալիս հարուստ գյուղացուն: Այսպիսով կուլակի ձեռքում կարող ե շատ հող հավաքվել:

Կուլակի տնտեսության մի չորրորդ ձևն ել կա: Նրանք ստրկական պայմաններով վարձով տալիս են գյուղատնտեսական ինվենտարը:

Բերենք կենդանի որինակ՝ գյուղացի Կոսակով:

Կոսակովն ունի յերկու ձի, յերեք կով ու 15 դեսիատին ցանքս:

«Մենք յերկար խոսուած ելինք այն մասին, թե ինչպես ե նա ոգտագործում իր ձիերը, և յերկար ժամանակ մենք վոչինչ չկարողացանք իմանալ, բացի նրանից, վոր նա իր ձին ու ին-վենտարը տալիս ե իր ազգականներին «ոգտվե-լու» համար: Միայն խոսակցութեան վերջում Կոսակովը՝ տեսնելով, վոր այդ տեղեկութեանները նրա վրա հարկ դնելու նպատակով չեն հավաք-վում, հայտնեց՝ սերմացանը մի սրով տալիս ես, դրա համար գալիս, քեզ համար յերկու որ աշ-խատում են. գարնանը հարևանիդ մի փոքր խոտ ես տալիս, նա տոկոսներով վերադարձնում ե և լավութեանդ համար բարեկամաբար գալիս ե և մի որ աշխատում»:

Բացի իր հողից նա մշակում ե մեկի յերեք շնչի և մյուսի յոթ շնչի հողը: Դրանից նա 150 փութ զուտ յեկամուտ ե ստանում:

Վերջին ժամանակներս կու-Պյուզի Երես-վորման քափը. լակն աճել-ամրացել ե: Այդ մա-սին վկայում են ամբողջ յերկրից ստացած տեղեկութեանները: Այդ մասին ե պատ-մում գյուղում յեղած յուրաքանչյուրը:

Սակայն ինչպիսին ե գյուղի շերտավորման թափը, վճրքան արագ ե նա առաջ գնում:

Հիմք կամ արդյոք խուճապի մասնվելու կու-ի հանդեպ, խուճապ, վոր հայտնաբերեց կու-կցութեան ոպպողիցիան: Այդ հարցի լավա-ւյն պատասխանը տալիս են այն թվերը, վո-նք ցույց են տալիս, թե ինչպես են ցանքսերն - անասունը բաշխված յեղել գյուղացիական նստեութեանների մեջ 1922 և 1926 թվերին: Այդ թվերը, վոր ցույց են տալիս ՆեՊ-ի ընթաց-քում տեղի ունեցած փոփոխութեանները, բե-րել ե ընկ. Ռիկովը Մոսկվայի նահանգական 14-րդ կուսկոնֆերանսում և կազմված են մի-քանի հարյուր հազարավոր գյուղացիական տնտե-սութեանների ուսումնասիրութեան հիման վրա:

Ցանքսերի տարածութեան բաշխումը

	1922 թ.	1925 թ.
Առանց ցանքսի . . .	4,1 ⁰ / ₁₀₀	1,8 ⁰ / ₁₀₀
1-2 դեսիատին ցանք.		
սով (չբավոր)	50,5 ⁰ / ₁₀₀	36,3 ⁰ / ₁₀₀
2-6 դեսիատին (միջակ)	40,5 ⁰ / ₁₀₀	52,6 ⁰ / ₁₀₀
10-25 դ ե ս ի ա տ ի ն		
(կուլակ)	0,6 ⁰ / ₁₀₀	1,3 ⁰ / ₁₀₀

Ի՞նչ ե ցույց տալիս այս դիագրամման, Ցանքս չունեցողների թիվը կրճատվել ե ավելի քան յերկու անգամ: Մի քառորդից ավելի կրճատվել ե չբավոր տնտեսութեանների թիվը: Բայց դրա

փոխարենն խիստ աճել է միջակ ցանքատերերի խմբակը, այսինքն միջակ տնտեսությունները: Միևնույն ժամանակ զգալի չափով աճում են կուլակային տնտեսությունները. նրանք աճել են յերկու անգամ:

Նման պատկեր են տալիս նաև անասունների վերաբերյալ թվերը. —

	1922 թ.	1925 թ.
Լծկան անասուն չունեցող	34,1 ⁰ / ₀	31 ⁰ / ₀
Մեկ-յերկու գլուխ անասուն ունեցող (միջակ տնտեսութ.)	65 ⁰ / ₀	67 ⁰ / ₀
Յերեք և ավելի անասուն ունեցող (կուլակ տնտեսութ.)	0,5 ⁰ / ₀	0,7 ⁰ / ₀

Այստեղ ևս նվազել է անասուն չունեցողների խմբակը, և ավելացել են միջակ և կուլակային խմբակները:

Հայաստանում չքավոր տնտեսությունների զարգացման մասին վկայում է հետևյալ աղյուսակը.

	1923 թ.	1924 թ.
Ցանքս չունեցող . . .	16,55 ⁰ / ₀	12,54 ⁰ / ₀
Անասուն չունեցող . . .	39,68 ⁰ / ₀	31,02 ⁰ / ₀
Թե ցանքս և թե անասուն չունեցող	10,59 ⁰ / ₀	9,65 ⁰ / ₀
Արոր կամ զուծան »	74,24 ⁰ / ₀	69,29 ⁰ / ₀

Ի՞նչ չեզրակացություն կարելի յե անել այս աղյուսակներից:

Շերտավորումն առաջ է գնում. այդ են ցույց տալիս կուլակային խմբակի թե ըստ ցանքսի և թե ըստ անասունների աճման թվերը: Բայց շերտավորման թափն այնպես է, վոր նա գյուղի դեմքը չի փոխում. գյուղը մնում է միջակ, և այդ հաշվի չե առնում կուսակցությունն իր քաղաքականության մեջ:

Վոր կուլակը կուժեղանա, այդ կուսակցությունը նախատեսել էր այն ժամանակ, յերբ նոր տնտեսական քաղաքականություն էր մտցնում: Այլ կերպ էլ չեր կարող լինել: Բայց վոչ մի հիմք չկա խուճապական չեզրակացություն հանելու այն մասին, թե կուլակը դարձել է գյուղի տերը: Թվերը վկայում են, վոր գյուղատնտեսության վերելքը տարածվում է գյուղացիության բոլոր խավերի վրա:

Գյուղի շերտավորման դան-
Ի՞նչ է դանգա-
զացումս ցեռոս-
զաղ ընթացքը բացատրվում է
վորման քափք. Խորհրդային իշխանության գո-
յությամբ, նրա ձեռք առած բոլոր միջոցներով:

Ընդհակառակն, այնտեղ, վորտեղ գոյու-
թյուն ունի բուրժուազիայի իշխանությունը,
ամբողջ պետական ապարատը, ամբողջ կապի-
տալիստական մեքենան աշխատում է հոգևոտ

չերտավորման, վորովհետև բուրժուազիան շահագրգռված է, վորպեսզի գյուղի զարգացումն ընթանա այնպիսի ուղիով, վորտեղ զարգանում են կապիտալիստական, շահագործական տարրերը, և միաժամանակ ազքատանում, քայքայվում է գյուղացիության հիմնական մասսան:

Գյուղի շերտավորման դանդաղացման համար մեծ նշանակություն ունի հողի ազգայնացումը: Հողը դադարել է առուծախսի առարկա լինելուց, և այդ հնարավորությունն չի տալիս կենտրոնացնելու առանձին գյուղացիների ձեռքում մեծ քանակութամբ հող: Պետական վարկը, հարկային քաղաքականությունը, գների և գյուղատնտեսական մեքենաները գյուղերում տարածելու քաղաքականությունը, կոոպերացիայի աշխատանքը, — Սորհրդային իշխանության ձեռք առած այս բոլոր միջոցները նպատակ ունեն ոգնելու չքավոր ու միջակ տնտեսություններին: Բավական է, որինակ՝ հիշել, վոր գյուղատնտեսական հարկից ազատված է չքավոր գյուղացիների տնտեսության մեծ մասը:

Ճիշտ է, սակավ չեն այնպիսի դեպքեր, յերբ Սորհրդային իշխանության ձեռք առած այս կամ այն միջոցը գյուղի վերաբերյալ տեղում ճիշտ չէ կիրառվում, խեղաթյուրվում է, և այն ժամանակ այդ միջոցը վոչ միայն չի ոգնում

չքավորության, այլև, ընդհակառակը, նպաստում է կուլակի ուժեղացման: Այդ տեղի յե ունենում այնտեղ, վորտեղ կուլակությունը գյուղում ուժեղ ազդեցություն ունի խորհրդային ստորին ապարատի վրա: Սակայն նման առանձին դեպքերն, այնուամենայնիվ, չեն փոխում Սորհրդային իշխանության ձեռք առած միջոցների ընդհանուր արդյունքները, վորոնք ամրացնում են չքավորին ու միջակին ընդդեմ կուլակի: Կուսակցությունն սոր ոպպողիցիայի բոլոր սխալների գլխավոր պատճառը յեղել է թերահավատությունը դեպի սոցիալիզմի շինարարությունը, դեպի մեր յերկրի ներքին ուժերը: Գյուղի շերտավորման հարցում ևս ոպպողիցիան թերագնահատում էր այն հանգամանքը, թե ինչ ազդեցություն է գործում գյուղի զարգացման ընթացքի վրա բանվոր դասակարգը հանձինս Սորհրդային պետության և տնտեսական իշխող բարձունքների:

«Շերտավորումն այժմ չի կարող նախկին չափերին հասնել: Միջակը մնում է գյուղացիության հիմնական մասսան, իսկ կուլակը չի կարող իր նախկին ուժն ունենալ թեկուզ հենց այն պատճառով, վոր հողը մեղանում ազգայնացված է, նա շրջանառությունից վերացված է: Իսկ մեր առևտուրը, վարկային, հարկային ու կոոպերատիվ քաղաքականությունն այն նպատակն ունի,

վորպեսզի սահմանափակի կուլակության շահագործական ձգտումները, բարձրացնի գյուղացիության լայն խավերի բարեկեցությունը և շտկի գյուղի ծայրահեղությունները» (Ստալին):

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻ ՁԱՆԱԶԱՆ ՇԵՐՏԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

Չնայած իր դանդաղ ընթացքին՝ գյուղի շերտավորումը զարգանալու յե տարեցտարի: Աճելու յե կուլակը, ավելանալու յե բատրակների թիվը:

Կուսակցությունը պետք է այս ամբողջն ուղղորդությամբ հաշվի առնի. կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը չեն կարող լուրջ հանդիսատես լինել այդ պայքարին: Պետք է ոգտագործել բոլոր հնարավորությունները՝ աջակցելու համար չքավորին կուլակի դեմ նրա մղած պայքարում, համախմբելու համար չքավորներին ու միջակներին ընդդեմ կուլակի: Այդ խնդիրների համեմատ կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը կառուցում են իրենց քաղաքականությունը գյուղի զանազան շերտերի նկատմամբ:

Միջակը պետք է բաժնոր գասա. կարգի գառնակիցը գառնակիցը. շահ է դարձել, և հինինն ասումե. «Յեթե մեզ հարկավոր է բարձրացնել մեր գյուղացիական անտեսության արտադրողականությունը, ապա

Հաստատելով, վոր գյուղը միջակ է դարձել, և հինինն ասումե. «Յեթե մեզ հարկավոր է բարձրացնել մեր գյուղացիական

ուրեմն մենք պետք է առաջին հերթին հաշվի առնենք միջակին: Կոմմունիստական կուսակցությունն ստիպված էր դրա համեմատ ել կառուցել իր քաղաքականությունը»:

Կուսակցության 14-րդ համագումարն իր բանաձևում կուսակցության առաջ, վորպես կարևորագույն խնդիր, դնում է միջակին պրոլետարիատի ամուր դաշնակիցը դարձնելը:

«Մենք պետք է անպայման, ինչ ել վոր լինի, ձեռք բերենք ամուր դաշինք բանվոր դասակարգի և միջակի միջև» (Ռիկով):

Չքավոր գյուղացիությունը պրոլետարիատի հաստատուն հենարանն է գյուղում: Նվաճել ենք արդյոք նույն չափով և միջակին: Վնչ: Միջակին պրոլետարիատի ամուր դաշնակից դարձնելը շատ դժվար խնդիր է: Դրա լուծումը յերկար տարիների ընթացքում կուսակցությունից ու բանվոր դասակարգից մեծ և լուրջ ջանքեր կպահանջի:

Միջակ անտեսությունն իր մի կողմով հարում է չքավոր, մյուս կողմով՝ հարուստ անտեսության, և այդ հանգամանքը տրամադրում է միջակին տատանվել բանվոր դասակարգի և կուլակության՝ գյուղական բուրժուազիայի միջև:

Սակայն պարզ է, վոր միջակի հիմնական շահերը պահանջում են միություն կնքել բանվոր դասակարգի հետ: Կուսակցությունը ձգտում է

գյուղում ստեղծել չքավորի ու միջակի միասնական ճակատ ընդդեմ կուլակի:

Ձեզվոր գյուղացիները պրո-
լետարիատի հե-
ճարանն է գյու-
ղում.

Յեթե կուսակցությունն
ասում է, վոր միջակը հողագոր-
ծության կենտրոնական դեմքն
է, վոր ներկա պարագայում հիմ-
նական խնդիրը միջակի համար մղվելիք կռիվն է,
ապա այդպիսով վոչ մի կերպ չի նսեմանում
չքավորի նշանակութունը:

Մեզանում ներկայումս 40% անլծկան են,
այսինքն գյուղացիական չքավորության են պատ-
կանում. չքավորը մնում է կուսակցության գր-
խավոր հենարանը գյուղում: Միջակի համար մղած
իր պայքարում կուսակցությունն առաջին հեր-
թին հենվում է հենց չքավորի վրա: Կենտրոնական
Կոմիտեյի 1925 թվի հոկտեմբերյան պլենումը
հատկապես քննության առավ «գյուղական չքա-
վորության մեջ տարվող աշխատանքի հարցը»: Այդ
վորոշումները, վոր հավանութուն գտան 14-րդ
կուսամաստումարի կողմից, իրենց մեջ մի շարք
միջոցներ են պարունակում չքավորներին կազ-
մակերպելու և նրանց անտեսական ոգնութուն
հասցնելու վերաբերյալ:

Համագումարի բանաձևում մասնանշված է,
վոր բանվոր դասակարգի՝ գյուղացիության վրա
ունեցած ղեկավարութունն ապահովված կլինի

միայն մի պայմանով, յեթե գյուղի անտեսական
վերելքի հետ միաժամանակ տեղի կունենա նաև
չքավոր գյուղացիության ու բատրակության կազ-
մակերպումը:

Կուսակցական 14-րդ համագումարը հաստա-
տեց Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի չքա-
վորության խմբակներ կազմակերպելու վերաբե-
րյալ վորոշումը: Այդ խմբակները միջոցով գյու-
ղացիական չքավորությունը կանգնում է կուլա-
կին դասակարգային կազմակերպված դիմադրու-
թյուն ցույց տալու ճանապարհի վրա: Չքավոր-
ության խմբակները պետք է համախմբեն միջակ
ու չքավոր ուժերին կուլակի դեմ: Չքավորները
պետք է ձգտեն «միջակների հետ մեկտեղ պաշտ-
պանել ձեռք առնվող գործնական միջոցները
խորհուրդների, կոոպերացիայի, փոխոգկոմիտեի
աշխատանքներում և միջակի հետ մեկտեղ թեկ-
նածություններ առաջ քաշեն վերնտրություն-
ների ժամանակ» (Կենտկոմի 1925 թվի հոկտեմ-
բերյան պլենումի բանաձևից):

Ինչո՞վ է զստ Կուլակը բանվոր դասակարգի
զավոր կուլակը թշնամին է, վորի դեմ պետք է
յե՛վ ի՞նչ պէս
պես՞ է կռվել կռիվ մղել: Իսկ ինչո՞ւ յենք մենք
ճրա գեմ. թույլ տալիս, վոր մեր թշնամին

աճի, հարստանա: Ավելի լավ չէ՞ր լինի բռնագրա-
վել նրա գյուղատնտեսական ինվենտարը, հացի

ավելցուկը, արգելել նրան առևտուր անել, վաշխառութեամբ զբաղվել:

Մենք հենց այդպես ել սնոււմ ելինք ռազմական կոմմունիզմի տարիներում: Յերբ կուսակցութիւնն իրեն նպատակ եր դնում կուլակներինց գտել գյուղը, այն ժամանակ գլխավոր խնդիրն եր՝ հեղափոխութիւնը պաշտպանել հակահեղափոխական ուժերի զինված հարձակումից: Կուլակը մեր թշնամին եր և մի շարք դեպքերում հակահեղափոխութեան հետ միասին մեր դեմ զինված կռիվ եր մղում: Այն ժամանակ մեր խնդիրն եր՝ խել կուլակից նրա տնտեսական ուժը, վորը նրան հնարավորութիւն եր տալիս ազդելու գյուղի վրա:

Այժմ պայմաններն ուրիշ են:

Կուսակցութիւնը նոր տնտեսական քաղաքականութիւն ե վարում: Գյուղացիական տնտեսութեան հետ մերձեցման համար մտցվեց սզատ առևտուր, վորը, ինչպես մենք տեսանք 3-րդ զրույցում, կապիտալիզմի կենդանացում առաջացրեց: Այժմ գտել գյուղը կուլակներից՝ կնշանակեր խանգարել կուսակցութեան քաղաքականութեանը (վորը ձգտում ե բարձրացնել գյուղատնտեսութիւնը), իսկ այդ անմիջապես կանդրագառնար արդյունարեբութեան վրա: (Այդ մասին մենք մանրամասն խոսել ենք 3-րդ զրույցում):

Կուլակի դեմ կռվելու ձևերը մենք պետք ե հարմարեցնենք նոր տնտեսական քաղաքականութեան պայմաններին:

Պետութիւնն ամենից առաջ սահմանափակում ե կուլակի շահագործական ձգտումները:

Հարկային քաղաքականութիւնը գյուղում այնպես ե կառուցված, վոր հարկերն իրենց ծանրութեամբ ընկնեն կուլակային տնտեսութեան վրա:

Պետութիւնն իրավունք ունի լուծել (քանդել) կուլակի ու չքավորի միջև կնքված այնպիսի ստրկացուցիչ գործարքներ, վորպիսին չքավորն ստիպված ե լինում կնքել շնորհիվ իր ծայրահեղ կարիքի: Այսպես եր, որինակ՝ 1921 թվի սովի ժամանակ, յերբ չքավորին տված մի փութ հացի համար կուլակը յերբեմն իրեն իրավունք եր պահում վերցնել չքավորի ապագա բերքի կեսը:

Գյուղում բանվորական ուժ վարձելու մասին հրատարակած կանոնները սահմանափակում են կուլակի՝ բատրակի բերբերյալ ունեցած շահագործական ձգտումները:

Բայց կուլակի դեմ կռվելու ամենալավ միջոցը չքավորին ու միջակին ցույց տված տնտեսական ոգնութիւնն ե, չքավորին և միջակին կուլակի դեմ համախմբելն ե, վորի մասին մենք վերևում խոսեցինք:

կուլտիւնները թվով շատ չեն. և, անք կազմում են ամբողջ գյուղացիութեան ընդամենը 3-4 տոկոսը: Իսկ ինչո՞վ ե ուժեղ կուլակը, կամ վո՞րն ե նրա պատճառած վտանգը: Այդ գյուղի մյուս խավերի, և ամենից առաջ միջակի վրա ունեցած ազդեցութիւնն ե: Շնորհիվ իր տնտեսական ուժին, կուլակը հաճախ իր ազդեցութեան տակ ե պահում ամբողջ գյուղը:

Պետական վարկ կազմակերպելով չքավորներին ու միջակներին համար՝ մենք այդպիսով իսկ կովում ենք կուլակի վաշխառութեան դեմ: Կոպերացիայի միջոցով բարձրացնելով գյուղացիական մասսայի բարեկեցութիւնը, մենք այդպիսով իսկ ջլատում ենք կուլակի տնտեսական ուժը: Կուլակի դեմ չքավորի և միջակի ճակատ ստեղծելու նպատակով կազմակերպելով չքավորական խմբակներ՝ մենք մեկուսացնում ենք կուլակին, զրկում ենք նրան գյուղացիական մասսայի վրա ազդելու հնարավորութիւնից:

Յեկու բեհում
գյուղացիակա Ե
հարցում.

Կուսակցութեան՝ գյուղում կատարած աշխատանքի պայմանները շատ բարդ են: Մեր գյուղացիական քաղաքականութեան հաջողութեան յերաշխիքը նրանումն ե, վոր յուրաքանչյուր կում-յերիտական կուսակցական պարզ հասկանա կուսակցութեան հրահանգները (դեկավարող ցու-

ցումները) և վորոշակի կիրառի այդ կյանքում:

Կուսակցութիւնը պետք ե կովի գյուղի վերսբերյալ իր ունեցած քաղաքականութեան խեղաթուրման բոլոր փորձերի դեմ: Կուսակցութեան մեջ նկատվում են այդպիսի խեղաթուրումներ, թեքումներ:

Այդ թեքումներից առաջինն ե՝ «կուլակի և ընդհանրապես գյուղի կապիտալիստական տարրերի դերը նվազեցնելը, կուլակային վտանգի շարունակը» (Ստալին):

Այդ վտանգավոր թեքում ե: Թշնամու դեմ կովելու համար պետք ե տեսնել նրան, պետք ե ուսումնասիրել նրա ուժերը: Ով «բացասում» ե կուլակային վտանգը, նա, ընկ. Ստալինի ասելով, զինք թափ ե անում կուսակցութիւնը, վորովհետև չի կարելի կովել մի թշնամու դեմ, վորն, իբր թե, գոյութիւն չունի:

Յերկրորդ թեքումն ալն ե, յերբ, ընդհակառակը, չափազանցնում են կուլակի ուժը, գերազնահատում են կուլակի վտանգը:

Այդ թեքումն եր արտահայտում ոպպողիցիան 14-րդ համագումարում: Ոպպողիցիայի ընկերները նույնիսկ հայտարարում ելին, թե արնտեսական տեսակետից կուլակն ե դարձել գյուղի տերը:

Միջակի այդպիսի թերազնահատութիւնը ձեռնտու կլինել միայն կուլակին: Միջակի հա-

մար կովում ե մի կողմից կուլակը, մյուս կողմից բանվոր դասակարգը: Ահա թե ինչու ով մոռանում ե միջակին, նա ուժեղացնում ե կուլակին: Կուսակցության համագումարը հավասար խտությամբ դատապարտեց յերկու թեքումները: Միևնույն ժամանակ համագումարն «առանձնապես շեշտում ե» միջակի թերագնահատման թեքման դեմ կովելու անհրաժեշտությունը: Քանի վոր այդ թեքման դեմ կովելու համար կուսակցությունն ավելի քիչ ե պատրաստված:


Միջակին նվաճելը, ինչպես տեսանք, շափազանց ծանր խնդիր ե: Կուսակցությունը կուլակի դեմ կովելու մեծ փորձ ունի: Բայց միջակին նվաճելու համար մենք աշխատանքի շատ քիչ փորձ ունենք: Մինչդեռ ապարդյուն կլինի գյուղացիության հետ մերձեցման աշխատանքը, յեթե չամրացնենք մեր միությունը միջակի հետ: Սոցիալիզմը կառուցել կարելի յե միջակի հետ միասին: Ահա թե ինչու առանձնապես ուժեղ պայքար պետք ե մղել այն թեքման դեմ, վորը խանգարում ե կուսակցությանը լուծելու ամենագոյն, յերկար տարիների խնդիրը, այն ե՝ միջակի նվաճումը:

ՀԱՐՑՆԵՐ

1. Վորո՞նք են գյուղատնտեսության հետամնացության պատճառները:
2. Ինչո՞ւ միջակին Լենինն անվանել ե «հողագործության կենտրոնական դեմք»:
3. Ինչո՞ւ նոր տնտեսական քաղաքականության ժամանակ սկսվեց գյուղի շերտավորումը:
4. Ի՞նչ ուղիներով ե առաջ գնում կուլակության դարգացումը:
5. Ի՞նչն ե դանդաղացնում գյուղի շերտավորման ընթացքը:
6. Ինչո՞ւ հիմք չկա «կուլակի հանդեպ խուճապի» համար:
7. Ինչո՞ւ միջակի նվաճումը գլխավոր խնդիր ե:
8. Ի՞նչպես ենք մենք կովում կուլակի դեմ:

ԱՇԽԱՏԱՆՔ

1. Գրիր, թե ինչո՞վ ե բացատրվում մեր գյուղատնտեսության հետամնացությունը:
2. Բացատրիր, թե ինչ ազդեցություն ե ունեցել գյուղատնտեսության հետամնացության վրա ցարիզմի քաղաքականությունը:
3. Յեթե կապ ունես գյուղի հետ, դրած հարցերին պատասխանիր քո անձնական դիտողությունն երի հիման վրա:



ԳԻՆԸ 10 ԿՈՊ.